

## Խ. ԱՐՈՎԵԱՆ

### ՈՐՊԵՍ ԱԶԳԱԳՐԱԳԵՏ

Ազգագրական Համոդիսի մօտաւոր նպատակն է հաւաքել ազգագրական բազմակողմանի նիւթեր, որոնց ուսումնասիրութիւնը կազմում է նրա հեռաւոր նպատակը, որովհետև առանց առաջնի անհնարին է երկրորդը:

Նիւթեր հաւաքուելու են ոչ միայն բուն ազգիւրից, ժողովը դիմումներից, ալ և, մանաւանդ անցեալի վերաբերմամբ, հայ և օտար գրականութիւնից, Մենք ինդիրել և խնդրելու ենք, որ մեր ազգագրագէտները նախ մէկ մէկ վերցնեն մեր և օտար մատենագիրները և նրանցից քաղեն բոլոր ազգագրական նիւթերը, որոնց միացումն ու ուսումնասիրութիւնը կը հետեւին անմիջապէս:

Հեղինակների մասին միքանի կենսագրական տեղեկութիւններ տալը անհրաժեշտ գատեցինք, որովհետև աւանդողի անձնաւորութիւնը շատ անգամ երաշխաւորում է հազորդուած նիւթի ճշութեան:

Ակս անգամ տալիս ենք Արովեան, պատրաստում են Փատառու Բիւզանդ, Պոօշեան և ուրիշներ:

Ա.

Կ Ս Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Խաչատուր Արովեանը ծնուել է 1804—5 թուին Սրբանի գաւռի Քանաքեռ գիւղում, Լազիստանից գաղթած առաքինի և ամենից լարգուած գերդաստան մէջ.

Մանկութեան տասը տարին հալլենի նահապետական տան



Գլուխան

Խ. Ա Բ Ո Ւ Ե Ա Կ Յ

Պահպահական ապահովագույն առաջնորդ

KH. ABOVEAN

"Ազգագրական Հանդէսան Ա. Տարիք, Ա. Գիբբ:

գարեի շահ անցելացնելուց իստոր. 1814—15 թուին Արտիեան բերում է Ս. Էջմիածին և լանձնուում է փրեմ կաթողիկոսին, որի կարգադրութեամբ վեց տարի շարունակ ուսանում է Անտօն եպիսկոպոսի մօս, միանդամայն ծառալեռով նրան որպէս փոքրաւոր:

1820—21 թուին Արտիեան Անտօն եպիսկոպոսի հետ գնում է Նախ Հաղրատ և ապա անցնում Թիֆլիս, ուր աշակերտում է լատինի հայկարան դարաբաղցի Պօղոս Վարդապետին:

1823 թուին Ներսէս Վ. կաթողիկոսը բաց է անում Ներսէսեան դպրանոցը, որի առաջին աշակերտներից մինն էլ Խաչատուր Արտիեանն է լինում, նրեք տարի առվորելուց իստոր նա աւարտում է ուսման ընթացքը, բայց գիտութեան համը առած լինելով՝ այլ ես չի բաւականանում արդքանով և ցանկանում է դնալ Վենետիկ, Մխիթարեան հայրերի մօս շարունակելու, Այս նպատակով զալիս է Հաղորատ՝ Նիկում կաթողիկոսից իրաւունք խնդրում, իստոք վերադառնում իւր ձննդավալլը, ուր ականատես լինելով պարսկական բռնութիւններին, ցանկանում է իրենց ամրող ընտանիքով արտասահման անցնել, սակայն չի լաջողում և Արտիեան վերահաստատում է Ս. Էջմիածին, և գառնում կաթողիկոսի գրադիրն ու թարգմանը:

1829 թուականը զալու է ինդաշրջելու նրա ընթացքը և գնելու նրան ան շաւզի վրայ, որը պիտի տանէր հայ մանկանց դասախարակութեան և հայ ժողովրդի ուսումնասիրութեան սքանչելի գործին. Այս թուին Դորպատի համալսարանի ուսուցչապետ գերմանացի Պարրուը զալիս է Էջմիածին, անուղղից դէպի Մասիսի զագաթը մի զիտական արշաւանք կատարելու և իրեն որպէս թարգման վերցնում է Արտիեանին. Այս արշաւանքի ժամանակ ուսուցչապետը ճանաշում է Արտիեանի բարձր ընդունակութիւնները և իմանում նըրանից, որ մնեց ցանկութիւն ունի զնալ շարունակելու, բայց նիւթական միջոց չունի. Պարրու վերադառնալով միջնորդում է լուսաւորութեան նախարար Լիլինին և սա լատիկացնում է Արտիեանին ճանապարհածախս և երեք տարուաէ ապրուստ՝ Դորպատի համալսարանում ուսանելու համար:

Մինչդեռ նիւթական արգելքները վերանում են, ազժմս էլ կաթողիկոսն և եպիսկոպոսներն են խոչընդուներ լարուցանում, չկամնալով նրան թուլ տալ զնալու մի ազդպիսի հեռու տեղ, այլակրօնների մէջ. Սակայն վերջի վերջով Արտիեան հանում է նպատակին, զնում է Պետքրուրդ (1830 թ. օգ. 25), ներկայանում լուսաւորութեան նախարարին և ապա զալիս Դորպատ, ուր շատ սիրալիր ընդունելութիւն է դտնում իւր բարերար Պարրուից, Ակնուհետեւ վեց տարի շարունակ անց է կացնում Պարրուի, Դրասի, Վալդե-

րի, Ֆրիզլէնդէրի և Բլումբէրգի կրթիչ շրջանում, որոնք զիտութեան հետ միասին և՛ սէր են ներշնչում գէպի հայ ժողովուրդն ու երկիրը:

Վերջացնելով համալսարանը, (ուր իւր որդու ասելով լսում է Էնցիկլոպեդիա) Արովեան գնում է Պետերբուրգ, ուր ներկալանում է կալորուհի Ալէքսանդրա Ֆեօդորովնալին և նրանից Պետերբուրգի հնագիտական ընկերութեան անդամ կարգում:

Յուսերով և գործելու աշխատով լի, Արովեան վերադանում է Էջմիածին, ուր ցանկանում է կուսակրծութիւն ընդունել և հիմնել մի դպրոց, բատիստէս քահանացուներ և ուսուցիչներ պատրաստելու: Սակայն Յովհաննէս կարբեցի կաթողիկոսը, չնայելով որ Արովեանի մասին բանձնարարական նամակ էր սացել ալլասեռ դաւանութիւնների նախարարից, բայց և անոպէ՞ մերժում է նրան, ավատարանդեալ ի հաւատուր կոչելով, Արա պատճառը մասամբ այն էր, որ շատ անբաստանութիւններ էր լսել նրա մասին, իբր թէ հակուած է գէպի բողոքականութիւնը, մասամբ էլ այն, որ Արովեան Ներսիսեան էր, ալսինքն կաթուղիկոսի հակառակ, Ներսիսի կուսակցութեանն էր պատկանում:

Արովեան դառնում է Թիֆլիս, ուր գրեթէ տարի ու կէս անտանելի ներդութիւններ կրելով՝ ապրում է վանքի խուցերից մինում և ուսում տալիս միքանի աշակերտների, Վերջապէս 1837 թ. ստիպուած ա'ի չքաւորութենէ» մտնում է արքունական հառաջութեան և կարգում Թիֆլիսի նահանգական դպրոցի տեսուչ, բայց միան ալսպաշտոնով չքաւականալով՝ նա բաց է անում մի մասնաւոր պահպիօն:

Նորն թուին Արովեան ուղղելցում է Վակներին, ցոյց է տայիս Էջմիածինը, Արարատը, տեղեկութիւններ հաղորդում հայ ժողովուրդի մասին և վերադանում Թիֆլիս:

Ալսեղ, 1839 թ. Սեպտ. 8-ին, ամուսնանում է գերմանացի Էմիլիա Լոօգէի հետ, նախաղէս դաշն կապելով, որ պատկադրութիւնը և ունենալիք երեխաների մկրտութիւնը պիտի կատարուի Հալոց եկեղեցում:

Ցաջորդ տարին Արովեան Ղազանի համալսարանի հալոց լեզուի ամբիօնը ստանալու նպատակով երեք շարադրութիւն է ներկալացնում, սակայն մերժումն է ստանում, և ախունեան իրեն նույն ընդունուած գրականութեան՝ սկսում է գրել իւր աւէլքը Հալաստանին, որի մէջ աշխատում է գտնել և իւր վէրքերի սփոփումը, որովհետեւ չարանենդ մարդկանց բամբասանքը գնալով աճում էր 1842 թուին, դիրեկտորը կուսակալ Գոլովինին ներկալացնում է Արովեանի մասին:

մի զեկուցում, որտեղ ասում է թէ նա սպատառական բարոլականութեան տէր է և շատ ջանասէր՝ մանաւանդ ըստ իւր ուսուցչական պարագաներութեանց, բայց որպէս վերատեսուչ ուսումնարանի—անբաւարար բատկութեանց տէր է և անկարող է իրան լանձնուած ուսումնարանը բարձրացնել մինչ այն աստիճանին, որ օրինակելի լինի դա Անդրկովկասեան երկրում:

Այս զեկուցման հիման վերակ 1843 թուի ամառը Արովեան արձակում է իւր պաշտօնից և նշանակում Սրեանի գաւառական ուսումնարանի վերատեսչի պաշտօնակառար:

Ալստեղ ևս նա բաց է անում իւր մասնաւոր պանսիօնը, որի մասին Բողէնշտէտը ասում է, թէ աշակերտները այնքան լառաջադիմութիւն էին արել գերմաներէն լեզուի մէջ, որ մենք արձակ խօսում էինք նոցա հետ մեր մալրենի լեզուն:

Գանուելով Հայաստանի ծոցում, նա աւելի առիթ է ունենում ուսումնասիրելու իւր հալրենի երկիրն ու ժողովուրդը, և երբ Արինը 1844 թուին գալիս է ճանապարհորդելու, Արովեան Ներսէս Սի և Կուսակալի հրաւերով ուղղեկցում է նրան և բազմաթիւ տեղեկութիւններ տալիս: Ազապէս ուրեմն, Արովեան մեծ ծառալութիւն է մատուցանում ազդագրութեան, հայ ժողովուրդի մասին ահազին տեղեկութիւններ տալով Պարրոտին, Հակոսահառազէնին, Աւագներին, Արինին և Բողենչտետին, որի համար լատկապէս հաւաքել է մինչև անդամ Սրեանի սարդարեատի ժողովրդական երգերը:

Արդ ճանապարհորդութիւնների շնորհիւ աւելի խոր ճանաչելով հայ ժողովուրդը, նա գրում է Ներսէս Սին. ս... Տեսանեմ զարաբախտ վիճակ Հալրենեաց և չունիմ հնար և միջոց օգնել նմա իւիք, որ էր առաջին և վերջին նպատակ կենաց իմոց, և կարծելով՝ թէ կուսակրօնութիւն ընդունելով պիտի կարողանալ աւելի մեծ օգուտ տալ, խնդրում է բաժանել իրեն իւր ամուսնուց, ուչ վասն ախորիկ, զի ոչ սիրէ զընտանիս և զզաւակունս, այլ զի չիք նորա այլ կեանք, քան բարեխախտութիւն Հալրենեաց, և ձեռնադրել իրեն վարդապետ: սակայն Ներսէս կաթողիկոսը չի լարգում նրա խնդիրքը:

Այս մերժումը նրա վրաէ շատ վատ է ազդում և նա մոտառն-ջութեան մէջ է ընկնում: Օրից օր նրա տիսրութիւնը աւելանում է, երբ լանկարծ 1847 թ. առանց մեզ լատնի պատճառի արձակում է ուսումնարանի տեսչի պաշտօնից և պետական ծառալութիւնից:

Մ. Տէր-Ազարեանի ասելով, նա թողնում է Սրեանի գաւառական ուսումնարանը, Թիֆլիսի Ներսիսեան դպրանոցի տեսչի պաշտօնը ընդունելու համար:

Նատ չի անցնում, երբ լանկարծ, 1848 թուի Ապրիլի 2-ին,

Արովեան անդարտանում էր Արևանի նահանգապետը ալդ մտախն զեկուցանում է փոխարքալին, ասելով թէ «Ապրիլի 2-ի լուսադիմին մեկնել է զալտնի չէ ուր և աճնետ կորել, Ըստ իւր տանեցւոց բացարութեան, նա անջատուելուց երեք օր առաջ մտատանջութեան մէջ է ընկել դրեթէ ոչինչ չի կերել, սակաւ է խօսել, շորերը չի հանել և իւր թէ անքնութիւնից տանջուելիս է եղելու»

Նոյն դէպքի մասին Նազարեան առում է. «Արովեան անձնատուր է լինում մի խաւար բուսահատութեան, և լանկարծ չքանում է իւր ընտանիքի և բարեկամների միջից. բաց թէ ուր, ոչ ոք չգիտէ մինչև ալժմ Միտ դնելով նորա տրտում և լուսակտուր երգերին, որ մեր բարեկամներից մինը ուղարկել էր ինձ թիվլողից, պիտու է եղ բափակել, որ Արովեանը մի խաւար բոպէի մէջ մահու է տուել իւր անձը»

Պ. Տէրկարապետեան բոլորովին ալ կերպ է աւանդում, իւր թէ Արովեան 700 ր. փոխ է տալիս իւր սիրելի աշակերտ Շաֆի բէկի մօրը, որպէսզի սա կարողանալ արգելել պարտատէրերին իրենց ալդին պարտքի փոխարէն ձախոել տալու. Ալս պատճառով և՝ մտերմական բարարերութիւն է հաստատում Արովեանի և ալդ ընտանիքի մէջ և շատ անգամ Արովեան դնում է նրանց ալդին ժամանակ անցկացնելու. Ակս տեսակ մտերմական բարարերութիւնը մի կետ ընկած և պարմական փոխ կեանքին ընտելացած քաղաքում զանազան բամբասանքների առիթ է ատիխ. Սակալն Արովեան արհամարնում է ալդ բոլորը. Վերջապէս Շաֆի-բէկի հալլը, որ պարտքերի պատճառով փախել էր, վերադառնում է և մասսամբ բամբասանքներից դրգուելով, մասսամբ էլ կամենալով 700 ր. պարտքից ազատուել իրենց ալզու մէջ սպանում է Արովեանին և թաղում...

Ակսով կորչում է նա, որի վիշտակը դեռ շատ երկար կապրի համերի սրտերում.

(Կը շարունակուի)